

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Առաջինի կարգադրությամբ և օրհնությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոսը 1990 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 5-ը եղավ Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում՝ որպես Մայր Աթոռի և Նորին Սրբության ներկայացուցիչ մասնակցելու Երուսաղեմի հայոց նորընտիր Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի գահակալության հանդիսություններին:

Այս առթիվ Երուսաղեմ էին ժամանել Հայաստանյայց Եկեղեցու արտասահմանյան թեմերում պաշտոնավարող Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության շատ անդամներ:

Հոկտեմբերի 16-ին և 27-ին գումարվեցին միաբանական ժողովներ՝ կատարելով համար լուսարարապետի և պատրիարքական փոխանորդի ընտրություն: Լուսարարապետ ընտրվեց Տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյանը, իսկ պատրիարքական փոխանորդ՝ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը:

Հոկտեմբերի 27-ին, երեկոյան, Ս. Հակոբ եկեղեցում, Ս. Գլխադիրի խորանի առջև, տեղի ունեցավ աղոթք, ապա եկեղեցու Մայր խորանի առջև նորընտիր Պատրիարքը կատարեց իր ուխտը, որից հետո սկսվեց գահակալության հանդիսավոր արարողությունը 12 եպիսկոպոսների մասնակցությամբ: Այս առթիվ Մայր Աթոռի անունից Տ. Ներսես արքեպիսկոպոսը հանդես եկավ Պատրիարք Սրբազան Հորն ուղղված հետևյալ շնորհավորական խոսքով.

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ամենապատիվ
Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկյան
Արժանընտիր Պատրիարք Հայոց Առաքելական Ս. Աթոռ Երուսաղեմի,
Հանուն Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գերագույն Հոգևոր Խորհուրդի և Մայր Աթոռի միաբանության, ինչպես նաև հանուն Հայրենի մեր նորընտիր Կառավարության և միլիոնավոր հայրենաբնակ մեր զավակների, այս հոգեզմայլ պահին հաճույքն ունեմ Ձերդ Ամենապատվության բերելու սրտագին շնորհավորանքներ և բարի մաղթանքներ գահակալության այս բարեբաստիկ առիթով:

Փառք Ամենակալին Աստուծո, որ իր նախախնամող և պահապան Աջը հովանի է ըրած, դարեր շարունակ Երուսաղեմի Հայոց պատմական նվիրապետական Աթոռի վրա, պահելով ու պահպանելով այն բազմապիսի

փորձանքներից և վտանգներից և հասցնելով այն դարերի խորքից մինչև մեր օրերը:

Երուսաղեմի Ս. Աթոռը նման Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եղել է դարեր շարունակ մատակարարը հայ ժողովուրդի հոգևոր սնունդին: Դարեր շարունակ հայ ուխտավորն ու աղոթավորը եկել են Երուսաղեմ իրենց հավատի կանթեղը վառելու և այդպիսով կարողացել են դիմադրել բազմապիսի փորձությանց իրենց գոյության պահպանության ճանապարհին:

Հայ ժողովուրդի կյանքում, Սուրբ Էջմիածնի և այլ հոգևոր կեդրոնների շարքում, Սուրբ Երուսաղեմը եղել է լույսի և հույսի փարոս, հայ ժողովուրդի գոյության հավերժության նավը առաջնորդելով ռեպի խաղաղ ու արևոտ ափեր:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցին իր ժողովուրդով, կյանքի հուսալի մի նոր շրջան է թևակոխել, նոր շրջան ինքնորոշման, ազգային գիտակցության զարթոնքի, անկախության նաև միջազգային քաղաքական, ընկերային, կրոնական, ասպարեզ է իջել գործակցելով բոլոր բարի կամեցողության տեր երկրների և կազմակերպությանց հետ:

Սակայն մյուս կողմից մեր Եկեղեցին տակավին չէ բուժած եղեռնի դառն վերքերը և նրան հաջորդող կրոնական հալածանքների, սահմանափակումների երկար տարիների ծանր հոգեբանական վիճակը, որը իր խոր ազդեցությունն է թողել նրա վրա: Եվ ի վերա այսր ամենայնի եկեղեցական ներքին պայքարները ջլատել են Հայաստանյայց Եկեղեցու վերակազմակերպման բոլոր փորձերը:

Այժմ հայ ժողովուրդը ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի վերազարթոնք է ապրում և իր աչքերը բևեռել է իր Եկեղեցու վրա, սպասելով՝ որ նա իրեն տա անհրաժեշտ հոգևոր սնունդը: Վերաբացվել են բազմաթիվ փակված եկեղեցիներ, հաստատվում են կրթական, կրոնական օջախներ և քայլ առ քայլ Եկեղեցին վերստանձնում է իր դարավոր դերը կրկին դառնալով հայ հոգու մատակարարը:

Ո՞վ պիտի տա մեր ժողովուրդին նոր կյանք, նոր տեսիլ և նոր հավատ, եթե ոչ Հայաստանյայց Եկեղեցին:

Մենք երջանիկ ենք, որ հայ կյանքի այսպիսի բախտորոշ ժամանակահատվածում, Հայոց Երուսաղեմի Սրբազան Աթոռի արժանավոր գահակալը Դուք ընտրվեցիք, գիտակից մեր ժողովուրդի ներկայի հոգևոր կարիքների:

Հավատում ենք, որ Ձերդ Ամենապատվության գահակալության տարիները լինեն երկար, լինեն հոգևոր զարթոնքի, վերանորոգ հոգևոր կյանքի և կրթական իմաստով նոր բարձունքների նվաճումի տարիներ: Վստահ ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ համագործակից և նվիրապետական մյուս Աթոռների հետ համախորհուրդ, պիտի կարողանաք վերստին վառել ջահը հավատի, կոչման և նվիրումի, ինչպես անցյալում, այսօր ևս Սիոնի այս բարձունքում, օրհնյալ հողում Երուսաղեմի:

Վերստին բերում եմ Հայոց Հայրապետի շնորհավորանքը և խնդակցությունը Ձեր գահակալության այս երջանիկ պահին, մաղթելով Ձեզ կենաց երկար տարիներ, շենցնելու համար Հայոց Տունը Երուսաղեմի և բարձրացնելու ավելի վեր դրոշը Ս. Գլխադրի:

Թող չպակսի հավատը, նվիրումը և գիտակցված զոհողության ոգին, մեր ժողովուրդի և ի մասնավորի միաբան եղբայրների սրտում: Թող նրանք Ձեր օրինակով ներշնչված իրենց կյանքով կյանք տան այս Սուրբ Աթոռին, որպեսզի երբեք չպակսի ձեթը Սուրբ Գլխադրի կանթեղին:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա...»:

Շնորհավորանքի ջերմ ու սրտագին խոսքեր արտասանեցին նաև Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի կողմից՝ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանը, Կ. Պոլսի հայոց Պատրիարքության անունից՝ Տ. Վահան եպիսկոպոս Թոփալյանը:

Գահակալության արարողությանը ներկա էին Երուսաղեմի Հունաց և Լատինաց Պատրիարքները, քրիստոնյա մյուս հարանվանությունների, ինչպես նաև մայրաքաղաքի հրեական և մահմեդական համայնքների ներկայացուցիչները, Երուսաղեմի քաղաքագլուխ Էդի Կոլեքը, Երուսաղեմում պաշ-

տոնավարող արտասահմանյան զանազան երկրների հյուպատոսներ և պաշտոնական այլ անձինք:

Գահակալության հանդիսությունը սկզբից մինչև վերջ տեղի ունեցավ կազմակերպված և բարձր մակարդակով: Հանդիսության ավարտին Պատրիարքարանի սրահում միաբանների պատվին տրվեց ճաշկերույթ, որն անցավ ջերմ մթնոլորտում:

Ամենապատիվ Պատրիարք Հոր գահակալության առիթով Տ. Ներսես արքեպիսկոպոսը Մայր Աթոռի անունից նրան հանձնեց արծաթյա մեռոնաթափ աղավնի՝ նույն մյուռոնի օծմամբ երկու միաբանությունների միասնությունը խորհրդանշող որպես հուշանվեր:

Հոկտեմբերի 30-ին, երեքշաբթի օրը, Երուսաղեմում հավաքված բարձրաստիճան հոգևորականները, արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ, շրջագայության մեկնեցին դեպի Թել Ավիվ, ապա՝ Մեռյալ ծով, Երիքով, Նազարեթ, Հայֆա և Յաֆա քաղաքներ:

Հետևյալ օրը, առավոտյան, Պատրիարք Հոր գլխավորությամբ, Հայ Եկեղեցու մի խումբ բարձրաստիճան հոգևորականներ, պաշտոնական այցելություն տվեցին Իսրայելի պետության նախագահ Խայիմ Հերցոգին: Հայ Եկեղեցու պատվիրակության և մեծարգո նախագահի միջև տեղի ունեցավ զրույց բարեկամական մթնոլորտում: Սույն այցելության ընթացքում Տ. Ներսես արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի և Հայաստանի պետական իշխանության անունից արտագին շնորհակալություն հայտնեց հարգարժան նախագահին այն մարդասիրական վերաբերմունքի համար, որ իսրայելական իշխանությունները ցուցաբերել են հայ ժողովրդին՝ Հայաստանում տեղի ունեցած ահարկու երկրաշարժի առթիվ օգնության ձեռք մեկնելով բազմաթիվ աղետյալների:

Նույն օրը, երեկոյան, պաշտոնական այս այցելության տեսագրությունը հաղորդվեց Իսրայելի հեռուստատեսությամբ:

Մայր Աթոռ վերադարձի ճանապարհին Տ. Ներսես արքեպիսկոպոսը եղավ Կիպրոս կղզում և այցելեց Լառնաքա և Նիկոսիա քաղաքներ: Նիկոսիայում սրբազան հայրը այցելություն տվեց տեղի հայկական եկեղեցուն, Մելքոնյան կրթական հաստատությանը, հայկական ծերանոցին, որտեղ ներկա եղավ ծերանոցի օրվա տոնավաճառին:

ԹՂԹԱԿԻՑ